

# Հ Ն Չ Ա Կ

## ԱՐԻՒՆԱՀԵՂ ՄԵԾ ԿՌԻՒ ՄԱՐԶՈՒԱՆՈՒՄ.

Սկսածքերի ութին Մարզուանում պատահած արիւնահեղ մեծ կուռում ն ա հ ա տ ա կ վ ե ց ա ն Հնչակեան Կուսակցութեան անդամներ՝ ՄԻՒԹԱՐ ՏԻՐ-ՆԻՇԱՆՆԱՆ, ՄԻՉՐԱՆ ԶԷՆԿԻՒՃԵԱՆ, մի երրորդը, որի անունը դեռ եւս յայտնի չէ եւ պատանի ԲԵՐՈՒՐԻ ԹԱՄԱՄԵԱՆ:

### ԱՐԻՒՆ, ՄԻՇՏ ԱՐԻՒՆ.

Մի բանի ամսից ի վեր է արդէն, որ ամենախիտ տէնօր, սարսափը տիրում է Մարզուանում: Քաղաքի հայկական թաղերը զինւորական պաշարման մեջ են շարունակ: Էլ հայ տուն չը մնաց, որ չը խուզարկվէ, էլ հայ չը մնաց, որ կասկածաւոր ու յեղափոխական չը նրկատվէ: Խուզարկում են, ձերբակալում են, տանջում են, բանտարկում են, ծեր, երիտասարդ, տղամարդ, կին, մինչեւ իսկ այս վերջինի հետ նաեւ իր երեխաները— ոչ ոք չէ կարողանում խուսափել այդ ժանտախտից, որ սուլթանի կառավարութեան զափթիէն ու պաշտօնեան իրանց հետ տարածում են ամբողջ քաղաքում: Բայց կառավարութիւնը կարծեց, որ դա բաւական չէ: Կա չը թողեց հայերին գէթ մի ըրպէ ազատ շունչ քաշել: Արբեցած իր կատաղութեամբ, կատաղած իր երկիւղից և քաջալերված Լարոպայի խլուծիւնից, իր հալածանքները վերջերս նա սկսաւ մղել աւելի ու աւելի առաջ, անզուսպ, անկապ, կործանիչ հողմային ընթացքով: Եւ այսօր ահա արդէն արիւն է հոսում առատօրէն Մարզուանի փողոցներով: Կեսարիայից յետոյ՝ այժմ Մարզուան: Արիւն, դարձեալ արիւն և միշտ արիւն: Անտարակոյս, արիւնախում գազանը, մարդակերպւորան մարդակերը չէ կարողանում յագենալ: Բայց որքան գծուծ են, որքան նրա երկիւղը մասնող են նրա գործադրած միջոցները: Եթէ քաջ հայի դէմ դնել մէկ ամբողջ բանակ՝ կազմված 500՝ ոտից մինչեւ գլուխ զինւորված զօրքերից, չերքեզներից, եւ ըր ո պ ա կ ա ն ը ժ ժ ի ծ խ ա խ ո ս ի ը ն կ երութեան մարդկանցից, և ապա այդքան բազմութեամբ ընդունակութիւն ունենալ այնքան արի լինելու, որ չորս հայ տեղն ու տեղը սպանել և երկուսին մահացու վերք

տալ—գրանք են բաշխօզուկ կատավարութեան գովելի սիրագործութիւնները: Այլ յիրաւի, չենք կարող չը խոստովանվել, որ եթէ սուլթանական զօրքերը գիտեն լաւ խոյս տալ քիչ շատուր թշնամու առջեւ, նրանք գոնէ այնքան քաջ են, որ հինգ հարիւր հոգի հինգ հայի դէմ չեն վախենում կռիւ մղել: Սուլթանն այսուհետեւ հայերին յաղթելու գիտն այլ եւս արել է. նա կարող է այլ եւս հանգիստ ննջել իր երկու ականջներով մետաքսէ բարձերի վրա. հայ բունաբարված կոյսի և հայ սպանած երիտասարդի արիւնը չէ կարող ցայտել մինչեւ նրա արքայական երեսը: Կախաղանը շատ ձեւակերպութիւններ է պահանջում և բացի այդ, շատ է աչքի ընկնում. կոտորել—այդ է ամենայսրմար միջոցը և «յաղթանակը» տանելու աւելի վստահութիւն ունենալու համար—հարիւրը մէկի դէմ, հինգ հարիւրը հինգի դէմ: Արդարեւ, շատ խելացի ու դիւրին միջոց է գտել «մեռցնելու» համար հայկական խնդիրը. կարծես թէ փութը վերցրել է ձեռքը և փչում է նրանով վառված կրակին: Ողորմելի է նա, այդ կառավարութիւնը, այդ ուժասպառ պառաւ հիւանդը, որ իր մահուան ճգնաժամին այնպիսի պինդ կերպով է սեղմում հայերին իր կրծքին, որ իր վերջին միանձգտական շարժումների ուժով է ուզում խեղդել նրանց: Շարունակիք, մենք էլ կը շարունակենք. կը ծիծաղէ կուշտ նա, ով կը ծիծաղէ վերջինը:

Եւ միւս կողմից հայ հերոսների փառաւոր անունների շարքն աւելի ձգվում, երկարանում է և դա՛ գընով որպիսի տանջանքի, որքան զոհողութեան: Այդ դառն, այդ դժուարին փորձութիւններն աւելի ու աւելի են ամրացնում մեր սիրտը, որպէս ամրացած է սիրտն այն զինւորի, որ պատերազմի դաշտում շատ ընկերներ է տեսել ընկած իր կողքին: Այս երեք-չորս տարւան ահաւոր փորձութիւններն իրանց մերթ պայթող, մերթ ներքին խուլ փոթորիկներով մեզ ընտելացրին եւ տանջանքի, եւ մահի, եւ կախաղանի հետ, այս արհաւիրքների հետ, որոնց երեւան գալու անխուսափելիութիւնը մենք գիտէինք դեռ մեր գործունէութեան առաջին օրից և բաց ու բարձր ճակատով առաջ խաղացինք դէպի նրանց: Այսպէս, ծովային փոթորիկները փորձված նաւատիրին ոչ միայն երկիւղ չեն պատճառում, այլ աւե-

լի են գրգռում նրա հակառակութիւնը կատարել ա-  
լիքների դէմ: Եւ մենք ընթացում ենք միշտ անաջ, ըն-  
թանում ենք դէպի մահ, մի մահ, որ, վերջին հաշուով,  
պէտք է պսակվէ մեր յաղթանակով:

Ղշմարիտ հերոսական զիմադրութեամբ էր, որով  
ամբողջ հինգ ժամայ ընթացքում հինգ հարիւրի դէմ  
կռիւ մղեցին հայ փոքրաթիւ քաջերը, ողբերկովս վը-  
սեմ գաղափարով, վեհանձն զայրոյթով ու արհամար-  
հանքով մերժելով անձնատուր լինել, ինքնավստահ հը-  
պարտութեամբ ասելով, որ միայն իրանց զիակները  
կընկնեն թշնամու ձեռքը: Մահն էր, անխուսափելի մահն  
էր կանգնած նրանց հանդէպ այդ բոպէին, և նրանք  
այդպիսի լեզու գործածեցին, և նրանք ուղեցին մեռնել  
յաղթված, այո՛, յաղթված, բայց մէկ այնպիսի պարտու-  
թիւն, որ պատմութիւնը դնում է փայլուն յաղթու-  
թիւնների շարքը: Եւ նրանք ընկան՝ ծակծկված թիւրքի  
գնտակներով, ընկան գրեթէ ամենքը, զէնքն իրանց ձեռ-  
քին, այն զէնքը, որ նախ քան ընկան իր տէրերը,  
տասնեակներով գլորեց թշնամու բանակից: Եւ այնտեղ,  
ուր նրանք ընկան, ապագան կը կանգնէ անխախտելի  
մէկ արձան, ներկայացնող այդ հերոսական խումբը, որ  
յանուն ժողովրդային սուրբ դատի իմացաւ դէմ տալ  
մահին հայերիս մէջ հազիւ տեսնված արիւթեամբ ու  
անձնազոհութեամբ, ներկելով ամօթի կարմրութեամբ  
այն հայերի երեսները, որ գիտեն միայն պուալ և միշտ  
վախենալ արիւնից, հանգիստնալով աննման օրինակ այն  
հայերի համար, որոնց սիրտը գիտէ բարախեցնել սուրբ  
գործը, և գրաւելով հայկական նորագոյն պատմութեան  
մէջ մէկ երես՝ արժանի Նէօնի դաստան անուան:

Ընկերներ, անմահ ընկերներ, ձեզ լինի փառքը և  
մեզ՝ նուիրական պարտականութիւնն՝ առնել ձեր սուրբ  
նահատակութեան երգվեալ վրէժը:

Թ Ղ Թ Ա Կ Յ Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Բ

ՆՄՄԱՆՆԵՐ ԹԻԻՐՔԻԵՅԻՑ

ԱՐԻՆԱՀՆՂ ԳԵՊՔ. — ՀԵՐՈՍԿԱՆ ԿՈՒԻ.

Մարզուան, 12 սեպտեմբեր 1893.

Մտիս ութին քաղաքս ասպարէզ եղաւ մի սոսկալի  
դէպքի: Կառավարութեան վերջին ամիսների կատարու-  
թիւնները վերջապէս պսակուեցան մի բարբարոսական ա-  
րիւնհեղութեամբ, մի մեծ դէպքով որ անմոռանալի կը  
մնայ յեղափոխական շարժմանց պատմութեան մէջ, ան-  
մոռանալի կը մնան եւս այդ դէպքի հայ հերոսների  
անունները:

Վաղուց ի վեր կառավարութիւնը որոշած էր իր  
ձեռքը ձգել Մարզուանի հոչակաւոր դարձած ասպա-  
տակային խումբը, որուն մինչեւ այժմ որքան հարուած-  
ներ կը հասցունէր, այնքան նորան անյաղթելի կը տես-

նէր, ինչպէս բազմագլխանի վիշապ մը, որու մի գլու-  
խը կտրելով տեղը ուրիշ կը բուսնէր: Վերջերս կառա-  
վարութիւնը կերպով մը կիմանայ ասպատակային խմբի  
ուր գանուիրը: Բաւական չը համարելով իր 150 զիւ-  
ւորները, շրջակայ լեռներն ու գիւղերը գտնուող չէր-  
ք է զ եւ կիւրճի աւաղակները կը հրաւիրէ եւ պաշ-  
տոնապէս կը զինէ նոցա ու վճռակներով ու մարթինի-  
ներով: Սակայն այդ ալ բաւական չը սեպէր. մեր երկ-  
րի մէջ եւրոպացի դրամատէրերի կազմած ծխախոտի րէ-  
ժիի ղօլճի ներս եւս կը հրաւիրէ, եւ նոցա եւրո-  
պացի տէրերը սիրալիւ յօժարութեամբ կը գնեն կառա-  
վարութեան տրամադրութեան տակ: Այդ կերպ ժողո-  
ված եւ աղէկ զինուած այդ «զօրքերի» թիւը կը հաս-  
նի մինչեւ հիւնդ հարիւրի: Այդ զօրքերը սեպ-  
տեմբերի եօթուորի գիշերը քաղաքիս Ղապլան եւ  
ճաւիի թիւք թաղերը կը պաշարեն եւ այնպէս  
խիստ, որ թուռն անգամ չէր կարող անցնիլ: Ասպատակ-  
ներն իմանալով պաշարուած լինելին, չորս կէտերի կը  
բաժնուին որպէսզի չորս կողմերէն կուրին... Գիշերը  
սարսափելի սպասողութեան մէջ կանցնի. սեպտեմբերի  
ութի առաւօտը շատ կանուխ վոյրենի աւաղակներուն  
ու պաշարողներուն յարձակման նշանը կը տրուի: Քա-  
նի մը անգամ կը կանչեն ասպատակներուն անձնատուր  
ըլլալ բայց ասոնց կողմէ ամեն անգամ կը ստանան ար-  
համարհական ու քաջարի պատասխաններ. «միայն դիակ-  
նիս կիցնայ ձեր ձեռքը. մենք կենդանի անձատուր եղող-  
ներէն չենք»: Հաղիւ այդ պատասխանն առած սուլթա-  
նի մարթիններու որոտը կը պայթէ հարիւրաւոր տե-  
ղերէն: Մեր քաջերը, ընդամենը 7 հօգի, անպատմելի  
խրոխտութեամբ, վստովուն, ողբերկաւ աչքերով դիւ-  
ցազնաբար չորս զանազան կէտերէ, տուներու մէջէն կը  
պատասխանեն այդ բազմաթիւ հրացաններուն իրենց գըն-  
տակներով: Կը պայթի կատարել կռիւ մը, որ կը սեւէ  
ամբողջ չորս ու կէս, հինգ ժամ շարունակ: Զօրքերու վրայ  
երբեմն-երբեմն ուղմբեր կը պայթնեն: Ասպատակներու  
ուղմբն ու գնտակները դիակներ կը ցաննեն գետ-  
նի վրայ: Բայց կռիւն անհաւասար էր, խիստ անհաւա-  
սար: Հինգ ժամ կուրէ վերջ կը նահատակուին  
հայ քաջերէն չորս հօգի, որոնցմէ մէկի անունը դեռ չը  
կըցանք իմանալ իսկ միւս երեքն են ՄԻԻԹԱՐ ՏԻՐՆԻ-  
ՇԱՆԵԱՆ, ՄԻՀՐԱՆ ԶԻՆԿԻՏԻԱՆ անուանի եւ իրենց  
արիւթեամբ հոչակ հանած ասպատակները, 18 տարե-  
կան պատանի մը ԹԱՄԱՄԵԱՆ մականուամբ, որ փութա-  
ցեր էր օրնութեան հասնել եւ ապա մահացու վէր-  
քով կիցնան ՀՆՈՐՀՔ ՀԱՏԱՐԵՒԵԱՆ և ՅԱԿՈՒԲ ՉԻ-  
ԵԱՆ: Այս վերջին երկուքը ձերբակալուելով, իսկ առա-  
ջիններուն դիակները՝ փութապէս կը տարուին կառավա-  
րութեան պաշտը: Ասպատակներէն մնացեալք, տեսնե-  
լով իրենց փամփոռչտները հատած եւ իրենց ընկերնե-  
րն ինկած, օգտվելով յառաջ եկած շփոթութիւններէն,  
ուղմբեր պայթեցնելով կը յաջողին խորտակել զօրքերու  
շղթան եւ անհետանալ: Կուրէն վերջ 4-5 կուրքերով  
դիակներ կը տանն կուրի դաշտէն, որք ինկած էին հայ  
քաջերու գնտակներէն: Գեռ ստուգած չենք, թէ թուով  
որքան են թշնամու բանակէն սպանուածները եւ բազ-  
մաթիւ վերաւորները: Մանրամասնութիւնք յաջորդին:

Երկրորդ օրը մոնետիկը կը պուայ թէ «վեհափառ

սուլթանի թշնամիները յաղթուեցան... Աստուած սուլթանի զըլը ճըք է սկի ն անէ. ամեն մարդ թող իր գործը շարունակէ: Այդ մունեակի պողոտն ահաւոր էր, մինչդեռ մեր սրտերէն արիւն կը կաթէր մեր կորցրած հերոսներու համար, մեր սյդ անմահ յեղափոխականներու համար, որոնց արդարեւ դիւցազնական կուրը խորին զարմանք է պատճառած ժողովրդեան ամեն խոււրու եւ ամեն ազգերու մէջ եւ ամենքն իրար կը պատմեն դաշտագողի նոցա անվեհերութիւնը, նոցա առիւծի կերպարանները. մէկը կըսէ՝ «անանկ գէմբեր ունէին, որ կ սրծես սուրբ ըլլային»: Այո, սուրբ են նորա եւ սուրբ կըլլայ մեր վրէժը:

Գ Ա Ն Ա Վ

Սամսոն, 4 սեպտեմբեր 1893.

Սուլթանի Տէրասատէթ (երջանկութեան դուռ) մայրաքաղաքը, նոյնպէս նորա երկրի զանազան կողմերը համաձայն խօլերան երեւան է եկեր. այդ պատճառաւ ամենաբարեբար սուլթանը հրամայած է գարանթիւններ. Արտաքին յարաբերութիւնները չափէն դուրս դժուարութեան մատնուած են. առեւտուրը բողբոլին կեցած է. Բայց իրաւ է, որ այլ համաձայն մը եւս շատ զոհեր կը տանէ այս օրերս Տաճկաստանի ամեն կողմերէն, այո, ճիշդ է այդ. եւ միթէ սուլթանը կը կարծէ թէ իր առաջարկած միջոցները մի օգուտ կրնան առաջ բերել. հէյ ողորմելի թագակիր, ինչ համաձայն եւ ինչ միջոցներ. . . Այդ խօլերան, այդ համաձայն ախտը—սկսած սուլթանի գանկէն ու սրտէն—պիտի փնտուել նորա նախարարների եւ բոլոր կառավարական ու զինուորական պաշտօնեաների մէջ, նոցա մէջն է խօլերան. այդ ախտը, համաձայն հիւանդութիւնը սուլթանի պալատէն, իբրեւ մահաշունչ հողմ կը փչէ, կը տարածուի Տաճկաստանի ամեն կողմերը եւ ամեն օր, ամեն ժամ կը հնձէ, իբրեւ հնձան կեանքի, ժողովրդի ամենաթարմ, մատաղ ոյժերը—երիտասարդութիւնը, կը քաշէ, կը յափշտակէ ժողովրդի արեան քրտինքով ձեռք բերած հալալ վաստակը, մինչեւ իսկ նորա գոյութեան միակ միջոց կտոր պանիրահացը: Ահա ախտը, ահա մահացուցիչ համաձայն կը. պիտի սորա դարմանը խորհել, միջոցներ ձեռք առնել. բայց մենք հաստատ գիտենք, համոզուած ենք որ սուլթանի կառավարութեան ձեռք առածը վարակեալ դեղեր են եւ գարանթիւնները (ամենախիստ հսկողութիւնը) չը վարակեալ (կարծուած) տեղերին մազաչափ օգուտ անգամ չեն տար. քանի որ համաձայն ախտի անհամար միջոցները բոյն են դրած սուլթանի կառավարչական—սկսեալ սուլթանէն մինչեւ ամենայնեան զապթիէն—մարմնոյ խորերը. ուրեմն նորա չեն կարող դարմանել, չեն կարող մի օգուտ սատարել, զի իրենք ախտաւորներ են, իրենց մէ է որ կը բղխի ու կը տարածի ամեն կողմ համաձայն: Այս մահացուցիչ համաձայնի դարմանը, այս ախտի առաջը առնելու միակ ւ ամենաաղբեցիկ զեղն ու միջոցն է քան դուռն, աւերուածն այն շէնք ին որը արդանդն է համաձայնի միջոցների, որը կեդրոնն է, շտեմարանն է նոցա—այսինքն ժողովրդային ապստամբութեան ընդդէմ թուրք բռնակալութեան— եւ այդ դարմանը չէ կարող չը գործարդուել. . . գուցէ սպասուածէ աւելի շուտ:

Առաջ բերենք համաձայնի մի քանի փաստերը: Կառավարութիւնը մի քանի ամիսներէ ի վեր, ի միջի այոց, Մարդուան եւ Ամասիա քաղաքները պատերազմական դրութիւն հաստատեց, կատարեալ պաշարման վիճակի մէջ դրաւ. . . Անթիւ ու անհամար ձեռքակալութիւնը, խուզարկութիւնը ամենահասարակ սովորական բաներ են դարձեր, մանաւանդ խուզարկութիւնը. ամբողջ թաղեր պաշարել եւ մէկ ծայրէն միւսը կարգաւ խուզարկել կարծես գիշեր կամ որ եւ տետրակ թղթատէին. կէս գիշերին պատերէն անցնիլ գողերու նման, գնալ այնտեղ, այն անկողնոյ մօտ ուր այր եւ կին քնած են. . . հրամայել որ ամեն տուն գիշերները առանց ճրագ վառելու (ժամը ըստ թրքաց մէկին) պառկին (զի եթէ ճրագ վառեն՝ խորհուրդներ կանեն, դաւադրութիւններ կը նիւթեն բարեխնամ սուլթանի կառավարութեան դէմ). հակառակ պարագային խորտակելով դուռը ներս մտնել տան անդամները կին, աղջիկ, երեխայ եւ այլն ս ստիկ դանակոծել, տանտէր էրիկ մարդը տանել բանտարկել իբրեւ ապստամբ-ճորագործ: Զաւակին համար հայրը, մայրը, քոյրը, էրկանը համար կինը երեխաներով բանտարկել: Միհրան Զէնկիւճիեան անուն երիտասարդը անհետացած, լինելուն համար հայրը Յարութիւն աղան, մայրը եւ 14-15 տարեկան Ղուսաբեր անունով քոյրը բանտարկուած կը մնան: Արջերս կառավարութիւնը մի խելացի միտք եւս յղացաւ, բանտարկելով այդ երկու քաղաքների քիչ թէ շատ աչքի ընկնող կատարութեան տէր հայ աղաներուն. մենք հաւատացած ենք այդպիսով մեր հաճի աղաները մեղի օգտակար մարդիկ կը դարձնէ: Մինչեւ այսօր Մարդուան բանտարկուած են 2 ամսէ ի վեր հաճի կարագետ աղա քիւրէմիտեան, հաճի Յովհաննէս աղա Գասպարեան, քերովբէ աղա Էօքսիւղեան եւ այլն. Ամասիա բանտարկուած են հաճի Մարութե աղա Էփրանոսեան եւ այլն. մեղքերնին հարուստ լինելնին է. . . վերջապէս «զորն ասել եւ զորն խոստովանել զի անթիւ են մեղք» պաշտպողուիս եւ ախտաւորեալ սուլթանի կառավարութեան. եւ սակայն այս ամենը միշտ կառավարութեան սպասած արդիւնքի հակառակը յառաջ կը բերեն. ախտը, համաձայն կը տարածուի. . . Ահա թէ ինչպէս: Մարդուան իր կատարած նշանաւոր տէնօրական գործողութեանց վրայ մէկ եւս կաւելցնէ ըզվզվէրի հարուածներով սպաննելով կոչկակար Միւր անունով գծուծ մի մասնիչ. տեղոյն քաջարի ասպատակային խումբը երբեմն կատաղի ու արիւնահեղ կռիւններ կունենայ բաղմաթիւ զինուորների դէմ ուր միշտ կառավարութեան զօրքը կը փայլի իր պարտութիւններով ու կորուստներով. . . ով որ կուզուի կառավարութեան նախամեծար կը համարէ թողած տուն տեղ ընտանիք, փախստական դառնալ, գնալ միանալ անձնուրացների բանակին, թափառիլ լեւնէ լեւ, սարէ սար, կուռիլ, սպաննել ու սպանուիլ. . . Ամասիա իր կատարած տէնօրական գործողութեանց վրայ աւելցուց մէկ եւս, սպաննելով ճէմէկեան անուամբ վատահոգի մասնիչը: Անցեալ շաբթու ցրուեցան թուրքերէն լեղուով նոր յայտարարութիւններ, կառավարութեան անհամար զեղծումները, պաշտօնից ապիկարութիւնը ու կաշտակերութիւնները մանրամասն նկարագրող. այս յայտարարութիւնը աննկարագրելի ահ ու սարսափ ձգեցին, առանց այն ալ շուտրած կառավարութեան վրայ թիւրք ժողո-

վուրդը այժմ կը հասկնայ հայոց շարժման նպատակը և ինքն եւս սկսաւ կառավարութեան անհամար զեղծումները ու խռովարար ընթացքը քննադատել ու իրաւունք տալ հայոց արդարացի պահանջմանց: Յայտարարութեանց ցրուելուն հետեւեալ օրը բոլոր խանութները փակեց ժողովուրդը 3-4 օր շարունակ. շուրսած կառավարութիւնը մերթ քաղցրութեամբ, մերթ սպառնալեօք ուզեց խանութները բաց անել տալ, բայց ժողովուրդն եղած խժոճութեանց դէմ խիստ բողոք բառնալով բանտարկեալների ազատումը կը պահանջէր. կառավարութիւնը կը դիպանի: Աերջապէս խելակորոյս կառավարութիւնը այսչափ խստութիւններ ձեռք առնելով, պաշարման վիճակի մէջ գնելով այդ երկու ըմբոստ քաղաքները, անկարող կը լինի համաճարակին առջեւը առնելու, որ միշտ կը տարածուի երկրին ամեն կողմերը:

Սամսոնը որ համեմատաբար աւելի հանդարտ էր, սկսաւ խառնակիլ. կառավարութեան խելքին ինչ փչեց՝ չենք գիտեր, սկսաւ խիստ հսկողութիւններ անել քաղաքիս հարաւային կողմը Սամսոն. Սեբաստիա շօսէին վերայ, Ելլէզ գիւղ կոչուած տեղը հաստատեց ոստիկանական պահանջանոց մը ուր եկած ու գնացած ապրանքների հակերի մէջ զէնք ու ռազմամթերք, « շնչակներ », նամակներ կը փնտռուին, ճանապարհորդներու, կառապաններու (վերջինքը մեծաւ մասամբ թուրք են) շատ նեղութիւններ պատճառելով: Ծովեղեքը և մաքսի մէջ նմանը չը տեսնուած հսկողութիւնք ձեռք առնուեցաւ. նաւէն դուրս եկող ամեն մի ճամբորդի, առանց խտրութեան սեռի և կրօնի, Փշտի տակ, մաղբի մէջ, գրպանները, ծոցերը, կօշիկների մէջ, գուլպանների մէջ մանրազնին կը խուզարկեն: Հրամայուեցաւ բոլոր շոգենաւային ընկերութեանց գործակալութիւններին (աճէնցիս) իրենց նաւակները նաւամատոյցէն (մաքսի առջեւէն) տանիլ բերել, մինչև անգամ եւրոպական փոստերը, որ սովորաբար աճէնցիաներու առջեւէն կերթար կուգար: Շոգենաւ մը գալուն 4 կողմը լրտեսներով ու ծպտեալ ոստիկաններով կը պաշարուի. նաւերէն դուրս եկած ապրանքները մանրակրկիտ քննութեանց կենթարկուին, մինչև անգամ գամերու տակաւները բոլորովին կը պարզուին, կօնեակների, պիտաների տակաւները կը բացուին. . .

Ղարթբէ երկու ամիս առաջ գծուած մատնիչներու թելադրութեամբ, յանկարծ ամեն կողմ անհամար լրտեսներ, ծպտեալ ոստիկաններ սկսան վիտալ (կարծես եղածները բաւական չէին). թաղերը, շուկաները, խանութներ, սրճարաններ, քաղաքիս եզերքը եղող զբօսավայրերը, պարտեզները յեղափոխականի մը ուրուականը կը փնտռէին, բայց ի դուր. ստուերը անհետացեր էր: Մարդուանցի Յովհաննէս աղա Ֆէնէրճեան անուն մի վաճառական իր եղբորմէ հեռագիր մը ստացած լինելուն ձերբակալուեցաւ ու քննութեան ենթարկուեցաւ. բարեբաղդաբար գիւրութեամբ աղատուեց: Խուզարկեցին Մարգիս աղա Բաբայան անուն վաճառականի տունը. խուզարկեցին Եփրանոսեան եղբարց տեղոցս վաճառատունը և ձերբակալելով Բարունակ Բարսեղեան անուն երիտասարդ գրքագիրը՝ « քէլէպճէ »-ով կապուած փոխադրեցին Մասիս (ինքը ամասիացի է). խեղճ երիտասարդը հազիւ 4-5 ամիս առաջ ազատուած էր Սեբաստիոյ բանտէն. ձերբակալեցին Նազարէթ աղա Երբիլէթլեան անուն վաճառա-

կանը, 24 ժամ պահելէ եւ հարցաքննելէ վերջ թող տրուին. սորա Մարդուան բնակող մէկ եղբոր Գրիգոր անուն որդին կառավարութիւնը կը փնտռէ եղեր, փախըստական է եղեր. իբր թէ յիշեալ Գրիգորը այստեղ եկած ու Նազարէթ աղան պահած լինի, այդ պատճառաւ գիշերանց խուզարկեցին Նազարէթ աղաի հայրենակից եւ աղքատական Ենովք աղա Կէնճեանի տունն ալ. խուզարկեցին տեղս նորեկ վաճառական Պետրոս Սիսակեանի վաճառատունը, ապրանքների բոլոր հակերը քակելով ու մանրազնին քննելով: Աւելորդ է ասել կարծեմ, կառավարութիւնն ոչ մի վնասակար բան ձեռք չէ ձգած այս գոլոր խուզարկութիւններէն, բայց դարձեալ կը շարունակէ. նա ժողովուրդը յանիրաւի վերաւորել, անպատուել առ ոչինչ կը համարէ: Մարդուան անուն անձի մը Պօլսէն կը հեռագրուի « Լուսիս նէմցէտէ տիր չըգարն », շոգենաւը այստեղ հասնելուն նաւամատոյցը պաշարուած էր ոստիկաններով ու լրտեսներով. ոչ մի նաւակի թոյլ չէր տրուեր երթալու շոգենաւի մօտ, զի « Լուսիս » մի փառօլ է կամ տինամիտ, կամ այսպիսի մէկ բան լինելու է կը մտածէին, և ահա կէս ժամ վերջը ամեն բան գտած պիտի լինէին գերապայծառ ապուշները. Մարդուան իր մէկ բարեկամի հետ կուզէ շոգենաւ երթալ Լուսիսին, որ իր աղջիկն է, դիմաւորելու. տեսնելով որ արգիլուած է՝ այնտեղ գտնուող գամիսէրէն հրաման կը խնդրէ. ինչ խորամանկ է գամիսէրը՝ չը զանար, ետեւէն ուղարկելով 15-20 ծպտեալ ոստիկաններ ու լրտեսներ: Մարդուանի իր աղջկայ հետ համարուելն ու աղջկայ իր հօրը մի բաց նամակ տալը հետախոյզ ու աշխուրջ ոստիկանաց աչքերէն չը վրիպիր. ոստիկանաց կողմանէ անմիջապէս կը խուլի նամակը. խեղճ մարդը, աղջիկը և բարեկամը ոստիկանների ստուար խուժբով պաշարուած կը տարուին միւթէսարքի փաշայի ներկայութեանը: Միւթէսարքի հարցմանց պատասխանելով Մարդուանը կըսէ « ես Մարդուանն եմ, այս ալ իմ աղջիկս Լուսիսն է, Պօլիս մօրեղբօրը տանն հիւր էր մի քանի ամիսներէ հետէ. մօրեղբայրը Լուսիան շոգենաւ գնելով ինձ կը հեռագրէ որ զաւակս դիմաւորեմ. նամակը որ խուլուեցաւ ձեռքէս՝ աներձագիս, որու տանը հիւր էր աղջիկս, գրած նամակն է »: Նամակը կը թարգմանուի. մի պարզ ընտանեկան բարեւագիր է եղեր: Մարդուան տուած այս ամենապարզ ու դրական բացատրութիւնէն հիասթափուած կարձակեն ձերբակալեալները. . . բայց մի զարմանար, սիրելի ընթերցող, ամաչելու բան չըկայ կառավարութեան համար, սօքա սովորական բաներ են:

Անցեալները յունական, կարծեմ, Սպարթա անուն շոգենաւն ուղտական մի նաւահանգստէ կուգար, ուրկէ եկողներուն 5 օրուայ դարանթինա որոշուած էր: Սպարթան շիտակ գնալով 4 օրէն կը հասնի Սինօպ ուր 24 ժամ սպասելէ վերջ մի քանի պաշտօնեայներ և բժիշկ կայցելէն ու քննելով բաթենթ (մաքրութեան գիր) կուտան. շոգենաւը քաղաքս եկաւ և իր գործերը աւարտելով գնաց Տրապիզոն, ատկէ շիտակ պիտի երթար Պօլիս. այնտեղ հասնելուն կատաղած վալին կը հրամայէ անմիջապէս երթալ Սինօպ 5 օրը վերջացնել և ապա գալ Տրապիզոն. նաւակետը ի զուր իօ փաթենթը ցոյց տալով կը բողոքէ, հարկագրեալ կը վերադառնայ Սինօպ բայց այստեղ ալ հանդիստ չեն թողուր ասելով որ

«դուն որոշեալ 5 օրը վերջացուցեր եւ, 4 օր ճանապարհին 1 օր ալ այստեղ, եւ մինչեւ օրս կասկածելի դէպք չէ պատահեր» . . . Շոգենաւի բոլոր պաշտօնեաները եւ ճանապարհորդները որ Տրապիզոն երթալու համար մտած էին, անլուր հայհոյանքներ թափելով հելլենական դրօշակը պարզած կը մեկնին շիտակ Պօլիս Սինոպ եղելութիւնը Պօլսոյ հելլենական դեսպանին հեռագրելով (այժմ կիմանամք թէ հելլենական շոգենաւային ընկերութիւնը դատ է բացեր վալիին դէմ և 8,000 ֆր. մնաս կը պահանջէ): Ի դէպ է այստեղ մէջ բերել որ թիւրք կառավարութիւնը առհասարակ հելլենական շոգենաւաների վրայ շատ վատ աչքով կը նայի, նորա կը նկատուին հայ յեղափոխականաց զէնք և ռազմավժերք փոխադրողներ. այդ ընկերութեան տեղւոյս աճէնթ Արդօղլիները (հայր և որդի) 5-6 ամիս առաջ ձերբակալուելով, իբրեւ կապոցներով «չնչակներ» ստացող ու երկրի մէջ տարածողներ (պիտի գիտնալ որ Արդօղլիք Յշններ են), տարուեցան Տրապիզոն. վալին 400 ոսկւոյ դուար մը կորզելէ վերջ 400 եւս կը պահանջէ ազատ արձակելու համար, մինչդեռ Պօլսոյ դատարանի առջեւ հաստատուած է անմեղութիւնին: Արդօղլիներու մերժումին ի պատասխան վալին սպառնացեր է որ վերջը կը «փիւշմանէր»): Կենդանի վալին իր արած սխալին մի գոյն տալու մտօք, նոյն օրը (շոգենաւին Պօլիս մեկնած օրը) կը հեռագրէ Մամսուն թէ յունական շոգենաւը որոշեալ 5 օրը չը վերջացուցած այդտեղ հանդիպած լինելուն այդ քաղաքը «պուլաշն» է (վարակեալ) և պետք է 5 օր գարանթինա պահէ. և ահա չորս կողմը կը պաշարուի. . . գարանթինա կը պահէ. . . Երկար, շատ երկար կը լինի այստեղ նկարագրել այդ 5 օրուայ կեանքը, անհամար ջորեպանների, ուղտապանների, կառապանների, հարիւրաւոր գեղացիների, որոնք իրենց սայլերով քաղաքս եկած էին զանազան գործերով (մեծու մասամբ մահմետականք), կրած վեհաները, զի 5 օր շարունակ հարկադրեալ էին մնալ իրենց անասուններով իրենք ինչ պիտի ուտէին, անասուններին ինչ պիտի կերցընէին. . . աննկարագրելի է արգիւտած ամբոխի կրած թշուառութիւնները (շատերը կը մուրալին քաղցէն չը մեռնելու համար. շատ անասուններ սատկեր են) և զբացած զայրոյթը որ 5 օր շարունակ անլուր հայհոյանքներ ու անէծքներ կը տեղացնեն հայրախնամ սուլթանի կառավարութեան գլխուն: 5 օրուայ մնասը որ տուժած է խեղճ ժողովուրդը մի վալիի «քեյֆի» համար 8-10 հազար լիւրա կը հաշի: Ահա այս է խօրհրան, աստը, համաճարակը, այս բոլոր նմանը չը տեսնուած խժղութիւնը չեն կարող առանց այն ալ դժգոհ ժողովուրդը (նոյն իսկ մահմետականները) անասման զայրոյթի ու կատաղութեան չը հասցունել. . . և կը գայ օրը որ մեր արդար իրաւանց ու վրէժինդրութեան ժամը կը հնչէ. . . այն ատեն համաճարակի առաջը կստնուի զի ժողորդեան թափած արեան մէջ կը խեղդուին համաճարակի միջբոսները. . .

ՄՈՒՇԵՂ

Մ Ե Տ Ե Ն Ե Լ Գ Ի Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Բ Ե Փ Ը Յ Ի Լ Պ Ե Տ Կ Ը Ն Ե Ը Ն  
 [ԳԱՄԱՌ - ՔԱԹՈՊԱ]  
 (Շարունակութիւն Nr 8-ից)

III

Յրանսիական Մեծ Յեղափոխութեան լայնածաւալ ալիքներն իրանց հարուածները զարնուած էին Յրանսիայի հողի սահմաններից դուրս, սպառնալով հեղեղել ամբողջ Եւրոպայի հասարակական հին կարգերը: Եւրոպական տէրութիւններն անսուրբ ու «սուրբ դաշնակցութիւն» էին կաղմել հանրապետական Յրանսիայի դէմ որի բուրժուազիան բերում էր աշխարհին քաղաքական նոր, աղատամիտ կարգեր և վերջին հարուածը տալիս աւատական վիճակին, որ արդէն վաղուց բնական կերպով նոյն իսկ բուրժուազիայի ծագման շնորհով, գընում էր դէպի անկում: Ամբողջ հին աւատական Եւրոպան զինուորվել էր Յրանսիական առաջին հանրապետութեան դէմ և գլուխը պտտվածի միջնած աչքերով սոսկալի պատերազմ էր յայտարարել նրան: Ամբողջ Եւրոպան գըղդում էր զէնքերի շառաչուններից ու զօրքերի ոտքերի տակ: Հանրապետութեան համար, բուրժուազիայի գերիշխանութեան համար դա երկունքի ճգնաժամի ամենախիստ րոպէն էր: Յրանսիայի չորս կողմից բաղմամբի, զորաւոր թշնամիներն ուժգնութեամբ ճայթեցնում էին նրա սահմանների պարիսպները: Բայց մեռնողն ժամանակ մի հերոսական ոգի ուռեցնում էր Յրանսիայի ժողովուրդի կուրծքը: Նա պատրաստութիւն էր տեսնում հերոսական մահի համար: Յրանսիացու աչքերն այլ եւս նայող չէին, այլ կայծակնացայտ հայեացքներ էին ձգում աջ ու ձախ. նա չէր շնչում, այլ թատում էր. նա չէր սպասում ինքնավտահ հպարտութեամբ, այլ ոգեւորված շտապում էր դէպի մահ, դէպի յաղթութիւն. նա հարբեցած էր իր յեղափոխական փայլուն յաղթանակներով և ծարաւ էր ծագել օտարին էլ յաղթելու. նա չէր ապրում, նա վառվում էր, նա կրակվում էր. նրա կեանքը կեանք չէր, այլ տենդային անընդհատ գործը, յոգնութիւն չիմացող ջղային շարժուածքներ. նա ներշնչված էր իր արած պատմական մեծ գործողութեան հպարտ գիտակցութեամբ և պատրաստ էր իրան, ամբողջ Յրանսիական ազգին, արեան դաշտում պառկեցնել ա՛նշունչ, այ՛ո, բայց անմահ, ինչպէս անմահ էին այն մարդկային ու քաղաքացիական իրաւունքները, որոնք ձեռք բերելու համար նա հիմնայատակ արեց հին Յրանսիան, կանգնելով նոր Յրանսիա, վերանորոգելով դրա կեանքը, վերանորոգելով ամբողջ հնացած աշխարհի կեանքը: Յրանսիայում դա մի պատմական րոպէ էր, որ ծնունդ էր տալիս հերոսների: Այդ րոպէն և պատերազմային հանգամանքներն էլ ծնունդ տվին միւսների հետ նաև մի հանճարի, որ հանճարն էր կործանման, հանճար բիրտ ոյժի, հանճար բռնութեան — մի զինուոր, մի կապորալ (caporal), որի անունն էր Բօնապարտ, Նապօլէօն առաջին: Անդ զինուորը, կապարէ սրտով երկաթէ ձեռ-

քով և օժտված լով զինուորական խելքով, դարձաւ աղէտ Գրանսիայի բոլոր թշնամի տէրութիւններն համար, դարձաւ աղէտ նաև եւրոպական ժողովուրդների համար, որոնք սակայն ուրիշ ոչինչ չէին ուզում, եթէ ոչ իրանց երկրում հաստատված տեսնել Մեծ Զեղափոխութեան յայտարարած իրաւունքները, և դարձաւ նոյնպէս աղէտ նոյն իսկ հարազատ ժողովուրդի համար: Ինչպէս հողմ, նա, ոտքի տակ առած ամբողջ Եւրոպան, կոտորած էր սիրում, աւերակ էր դարձնում ամբողջ երկիրներ, կործանում էր տէրութիւններ, հաստատում նորերը, ինքն իր ուսի վրա գցում արքայական ծիրանին, դնում կայսերական թագն իր գլխին և կիսամեռ շունչի մէջ պահում ամբողջ ազգեր: Այդ համաշխարհային տիրանը, սակայն, որ չը գիտէր ինչ էր արգելք ու սահման, որ իմացաւ յաղթել ու ջարդել հսկայական զօրքեր ու տերութիւններ, վերջապէս ընկաւ յաղթված ժողովուրդների ցամախն ու զօրութեան առջեւ: Եւրոպայի բոլոր քաղաքակրթված երկրներում բուրժուազիան արդէն ծնված լինելով և դրա հասարակական-տնտեսական ու քաղաքական սկզբունքները յայտարարված լինելով Մեծ Զեղափոխութեամբ՝ մի կողմից և միւս կողմից՝ նապօլէօնական, աշխարհում դեռ չը տեսնված, բռնութեան հարստածները ստանալով, հարազատ երկրների քայքայումն ու կործանումը տեսնելով, եւրոպական ժողովուրդներին տիրէց մի նոր հոսանք — ժողովուրդային կռիւներ նախ ընդդէմ Նապօլէօնի, որ և ընկաւ այդ ժողովուրդային պատերազմի դաշտում իրան յատուկ մեծութեամբ ու գոռոզութեամբ, և ապա նոյն իսկ իրանց սեփական աւատական ազնւականութեան ու տէրութիւնների դէմ, որոնք ուզում էին պահպանել հին, աւատական կարգերը և արգելք էին լինում բուրժուազիայի ու ժողովուրդային ընդհանրութեան քաղաքական նոր պահանջների իրագործման: Քաղաքակրթված երկրներում պայթում են ուսմակարանային, դեմոկրատական ներքին կռիւները:

Գա շարունակութիւնն էր Փրանսիական Մեծ Զեղափոխութեան եւրոպական ուրիշ երկրներում: Եւրոպայի այլ և այլ կէտերում պայթում էին ժողովուրդային ապստամբութիւններ ուսմակարանային ձգտումներով: Օտար լծի տակ ճնշված ազգերը մղում էին ազատական պատերազմներ, իսկ հարազատ տէրութեան լծի տակ տանջվող ազգերը կուռում էին այդ լծի դէմ յեղափոխելու համար երկրի այլ եւս հնացած ու առաջադիմութեան արգելք հանդիսացող կարգերը և հաստատելու համար նորերը՝ համապատասխան ժողովուրդային շահերին: Այսպէս, Նապօլէօնի արշաւանքների հէնց սկզբներից այդպիսի հոսանք տիրում էր ամբողջ Գերմանիայում, ուր ժողովուրդը հերոսական կատաղութեամբ կուռում էր մերթ այդ օտար աղէտի դէմ, մերթ իր կառավարութիւնների դէմ: Քսանական թւականներին հերոսական ապստամբութիւնն է ծագում հերոսական աւանդութիւններով սնված մի ժողովուրդի մէջ՝ Գոնաստանում, որ ձգտում է վերականգնել փիլիսոփաների ու աստուածների երկիրը, որն օրօրանն է մարդկութեան նոր քաղաքակրթութեան: Երբեմն իսկ աշողում է իր նախահայրերին արժանի դիւցազնական ճակատամարտեր մղել այդ ոգեւորված ժողովուրդն իր թշնամու դէմ, թիրքիայի դէմ, որը, ինքը լինելով մարմնացումն վայ-

րնութեան ու տգիտութեան, մի յոյն գիւղական խորճիթ չը թողեց առանց հրդեհի և մի յոյն չը թողեց առանց կապար խրելու նրա արի կրծքում: Եւ սակայն այդքան սարսափելի հարուածները չը կարողացան արգելք լինել այդ ժողովուրդի ազատման: Միեւնոյն քսանական թւականներին յանկարծ երեւան է ելնում Ռուսաստանում դեկաբրիստներն սահմանադրական շարժումը, որ խեղդվում է կախաղանի թուկով: Մօտենում են երեսնական թւականները և սոսկալի զօրութեամբ պայթում են Գրանսիայում յեղափոխական ուսմակարանային շարժումները, որոնք ոգեւորում են մի կողմից Հօլանդիայի լծից ազատվել ձգտող բելգիական ժողովուրդին և միւս կողմից Ռուսաստանի բռնութեան ծանր շղթաներով կաշկանդված Ահաստանին: Զեղափոխական ու ապստամբական ալիքները դուրս են հանում եզրի վրա բելգիական յեղափոխական նաւը, ինքնուրոյնութիւն է ձեռք բերում այդ ժողովուրդը, մինչդեռ միւսին, լեհ ժողովուրդին, խեղդում են ուսաց կառավարութեան զէնքով թափված լեհական արեան ծովում: Ամբողջ Եւրոպան դարձած էր մի հրաբուխ, որ ահաւոր ուժգնութեամբ տարածում էր իր կրակն ամեն կողմ: Ժողովուրդները կատաղութիւնների դէմ էին, կառավարութիւնները ժողովուրդների դէմ. — ազատութիւնը բռնութեան դէմ էր, առաջադիմութիւնն՝ անշարժութեան դէմ, ուսմակարութիւնն՝ աւատական ազնւականութեան դէմ: Ժողովուրդներն այլ եւս զարթնել էին այն խոր բընից, որի մէջ խրել էր նրանց ճորտութիւնը: Աշխարհը վերածնվում էր: Աերածնվելու վրա էր նաև մէկ ուրիշ մի ժամանակ հպարտ, այժմ համեստ ժողովուրդ՝ Ասիայի մի խուլ անկիւնում:

Հէնց այդ ժամանակներն էր, որ Գորպատի համալսարանը յաճախում էր մի համեստ հայ ուսանող, նրա անունն էր Խաչատուր Աբովեան: Հէնց այդ ժամանակներն էր ևս, որ հայ հասարակութեան կեանքը գտնվում էր մի խուլ բայց եւ կարեւոր շրջանում: Օտար լուծն ամեն կողմից ճնշում էր հայ ժողովուրդին: Պարսիկ խաների և տաճիկ փաշաների կամայականութիւնը չը գիտէր ոչ արգելք, ոչ սահման և ոչ յագեցում: Հողային յարաբերութիւններն ու հարկային ձեւերն այլ ևս չէին համապատասխանում ժողովուրդի պահանջներին — տնտեսական նոր ոյժերի զարգացման ու ազատման: Հայ ժողովուրդն, աղքատացած վերջին ծայր, գտնվելով տնտեսական քայքայիչ պայմաններում, ոչ միայն ծառան ու ճորտն էր իր տիրողների, այլ եւ նրանց գործիքն էր, նրանց խաղաղիկն էր: Նա տանջվում էր: Իրանց կատաղի վէճերում ու կռիւներում երբ տիրապետող տէրութիւնները պատառում էին նրա հողը, միմեանց՝ ձեռքից խլելով, որպէս եւ արիւնահեղ վէճերի նիւթ էին դարձնում այդ հողն իրար մէջ նրա աւելի մանր տէրերը, խաները: Մասամաս էին անում հողը, մասամաս էին անում նաև այն ժողովուրդին, որին պատկանում էր այդ հողը: Ռանտակ էր եղած անձնաւորութիւնը, մարդկային արժանաւորութիւնը, կատարեալ բացակայութիւն օրինական յարաբերութիւնների, որոնց հիմքն էր միայն անզուսպ կամայականութիւնը: Հայ ժողովուրդի բազմավէր մարմինը շարունակ արիւնաշաղախ էր, նրա երկիրն անընդհատ պատերազմների աս-

պարէզ էր: Այդպիսի պատմական հանգամանքներում գրտնըվող ժողովուրդը չէր կարող չատել բռնութիւնը եւ մի ներքին բնազդում, մի ներքին ձգտում չունենալ ազատվելու այդ ծանր վիճակից, դուրս պրծնելու այդ տնտեսական, հասարակական, մտաւոր կործանիչ պայմաններից ու անշարժութիւնից, տէր լինելու իր ճակատագրի: Այդպիսի պատմական բոլորում է ծնվում և մեծանում Արուսեանը:

(Կը շարունակվէ)

ԱԿՆ — ԵԱՆՑ.

ԵՐՐՈՂԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ.

**ՊԱՐԼԱՄԵՆՏԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ. — ԵՐՐՈՂ ՄԻՋԱԳԱՅԻՆ ՍՕՏԻԱԼԻՍՏԱԿԱՆ. ԿՕՆԳՐԵՍԸ ՑԻՒՐԻՍՈՒՄ.**

Վաղաքակրթված աշխարհը լարված ուշադրութեամբ էր հետեւում ֆրանսիական պարլամենտական (ազգային պատգամաւորական) քառամեայ ընդհանուր ընտրութիւններին, որ տեղի ունեցան նոր տոմարով օգոստոսի 20-ին եւ սեպտեմբերի 3-ին: Ընտրական պայքարը, շնորհով ֆրանսիայի ներքին քաղաքական շփոթ վիճակի եւ կուսակցական սուր հակառակութիւնների, այս անգամ առաջացրել էր ընդհանուր գրգռում ու տաք մրցութիւն: Սխալ կը լինէր, ի հարկէ, եթէ կարճէինք, որ այդ կուսակցական կռիւնները, որոնք շատ սուր կերպարանք են ստանում մանաւանդ ընտրութիւնների ժամանակ, կռիւններ են միայն ֆրանսիական կառավարչական կերպի համար, այն է միապետականների, թագաւորականների եւ հանրապետականների մէջ ըստ որում առաջինները ձգտում լինէին վերականգնել միապետական ֆրանսիան, իսկ վերջինները պահպանում լինէին ներկայ հանրապետական կերպը: Եթէ այդպէս կարճէինք, այն ժամանակ չը պիտի թող տայինք այնպիսի կուսակցական արմատական բաժանումներ հանրապետական բանակի մէջ, ինչպիսիներ կան, այլ պէտք է մեզ թւար, թէ իսկապէս երկու հակառակ բանակներ կան, մէկը հանրապետական եւ միւսը թագաւորական: Բայց այդպէս կարծելն ուղղակի հակառակը կը լինէր իրականութեան: Թողնելով մի կողմ այն տարբեր գոյները, որ գոյութիւն ունեն իւրաքանչիւր կուսակցութեան մէջ, ֆրանսիայում քաղաքական կուսակցութիւններն իսկապէս բաժանվում են երեք կարգի. միապետական ու թագաւորականներ, երկրորդ՝ հանրապետական պահպանողականներ ու արմատականներ եւ ապա սօցիալիստներ: Գրանցից իւրաքանչիւրը ներկայացուցիչ է հասարակութեան այս կամ այն դասակարգի քաղաքական տնտեսական շահերի, պահանջների ու ձգտումների: Այսպէս, առաջինները ներկայացուցիչ են այս կամ այն ֆրանսիական թագաւորական տոհմային ձգտումների եւ կղերի, արիստոկրատիայի ու հողատէր բուրժուազիայի շահերի, երկրորդները, այժմեան իշխողներն ու տիրապետողները, ջատագով են ֆինանսական, առեւտրական ու ինդուստրիական (արդիւնաբերական) բուրժուազիայի շահերի, իսկ վերջինները, սօցիալիստները, ներ-

կայացուցիչ են բանուր, աշխատաւոր դասակարգի շահերի ու ձգտումների: Այդ հիման վրա այդ զանազան կուսակցութիւնների կռիւններն իրար մէջ հանդիսանում են դասակարգային կռիւ՝ մղված իրար բոլորովին հակառակ քաղաքական ու հասարակական տնտեսական շահերի պատճառով, շահեր, որոնց հիման վրա էլ երեք, իրարից բոլորովին տարբեր հասարակական կազմակերպութեան հաստատութեան ձգտողներ կան. կայսերական ու թագաւորական, ներկայ բուրժուա հանրապետական եւ ապա սօցիալիստական: Եւ իւրաքանչիւր ընդհանուր ընտրութիւններին այդ դասակարգային կռիւն ընդունում է աւելի սուր, աւելի անհաշտ կերպարանք, զանազան կուսակցութիւնները կանգնած լինելով արգէն դէմ առ դէմ ժողովրդի առջեւ եւ իւրաքանչիւրը ձգտելով ընտրական բուռն առաւելութեամբ իր կուսակցական ազդեցութիւնը խտտացնել ազգային պատգամաւորական ժողովում եւ կամ թերեւս ընտրական քուէնների բացարձակ առաւելութեամբ տիրանալ քաղաքական ղեկին: Այս վերջին նպատակին ձգտում են թագաւորականներն ու սօցիալիստները, ընդդէմ հանրապետականների, որոնց ձեռքում է գտնվում կառավարչական ղեկը: Այս վերջին ընդհանուր ընտրութիւններն էլ այն տեսակէտից էին այնքան խիստ գրգռել քաղաքակրթված աշխարհի մտատանջ ուշադրութիւնը, որ այդ զանազան դասակարգեր ներկայացնող կուսակցութիւնների կռիւնները խոստանում էին լինել շատ տաք եւ իբրեւ հետեւանք ունենալ այն, որ առնուազն արմատական կերպարանափոխութիւն պատճառել պատգամաւորական գալիք ժողովի կազմութեան մէջ:

(Կը շարունակվէ)

ԱԿՆ — ԵԱՆՑ.

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ.

ԱՐԻՒՆԱՅԵՂ ԿՈՒՒ ԵՒ ԴԵՊԵՐԸ ՍԱՍՆՈՅ ՄԷՋ.

Վերջին բոլորին Բ ա զ է շ ի ց, գրված օգոստոսի 22-ից, ստացանք հետեւեալ խիստ կարեւոր տեղեկութիւնը, որ ցոյց է տալիս, թէ որքան խոսն ու սոսկալի է Մշջ կողմերի վիճակը. —

«Արգէն քանի մը ամէն ի վեր է որ Սասունը պաշարման մէջ է եւ նորա վիճակը խիստ խոսն սկ. թիւրք զօրաց եւ տեղացիներու մէջ ընդհարումներ յաճախակի են: Տ ա լ ա ո Ր ի կ ի շ ը ջ կ ա յ երեք գիւղերէն այդտեղ, Տալուրիկ, հաւաքուած են հայերը: 1,500 բիւրդ՝ «Համիտիէ» զօրքերէն՝ վերջապէս ճիգ թափած են մտնել Տալուրիկ, բայց սոսկալի կուոյ մը մէջ 300 հոգի կորցնելն վերջ՝ ստիպուել են նահանջել ու փախիլ: Աստուածութիւնը, նկատելով որ անկարող է այդ քաջ ժողովուրդը յաղթել, մանաւանդ որ բիւրդերն ալ սկսած են խօսիլ թէ չեն ուղեր այլ եւս յարձակիլ իրենց «գրացիներու» վրայ, կը փորձէ նենգութիւններով ու խաբէութիւններով յաղթել Սասունցիները: Քիւրդ պէկերի միջոցով կիմացնէ նոցա թէ պատուիրակներ զրկեն եւ իրենց պայմանները յայտնելով՝ բաւարարութիւն ստանան ու զէնքերնին վար դնեն: Երկար բանակցութենէ վերջ՝ տալուրիկից ու թ հոգի բիւրդ պէկերէն գրաւ կանոնն եւ

իրենցմէ չորս պատուիրակ կը ղրկեն այստեղ՝ Բաղէշ: Հոս հայ պատուիրակներն աներկիւղ կրօնն թէ նախ իրենց շրջակայ գիւղերը գանձուած 14 քիւրդ պէկերը բոլորովին հեռացուն երկրէն, յետոյ «համարիէ» զօրքերու ձեռքէն զէնքերն առնուին եւ միայն յետոյ պահանջներն որ հայերըն ալ զէնքերը վար գնեն ու իրենց պահանջմանց մասին բանակցեն: Բնականաբար համաձայնութիւն չը կայանար եւ կառավարութիւնը չը կրնայով անոնց մազին անգամ դիպչել՝ վախենալով թէ գրաւ մնացած ութ քիւրդ պէկերը կը սպաննուին, կը թողու պատուիրակներուն երթալ իրենց լեռները:

«Կատուութիւնը մեծ են. ձերբակալութիւնը անհամար: Վաճառականները երկիրը կը թողուն եւ կը պանդխտին Կովկաս եւ այլ երկիրներ:»

**ԿՐԿԻՆ ԱՐԻՒՆԱՅԵՂ ԸՆԴՀԱՐՈՒՄ.**

Կ. Պօլսից հեռագրում են յունական թերթերին.—  
 «Սամսոնի կողմերը Ալաշամ կոչուած գիւղի հայ բնակիչների եւ թիւրք բազմութիւ զօրքերի մէջ տեղի է ունեցել մեծ ընդհարում: Հայերի կողմից սպանված են 12 հօգի. զօրքերի կորուստը մեծ է, 128 սպանված. բազմութիւ վերաւոր երկու կողմից էլ:»



Կուսակցութեանս գանձարանում շնորհակալութեամբ ստացվել են հետեւեալ գումարները.—

ԱՄԵՐԻԿԱՅԻ Ֆիլադելֆիա քաղաքի Հնչակեան կուսակցութեան Մասնաձիւղից 90 դոլար, հանգանակված հետեւեալ անձերից.— Յ. Տ., Ապահոնի, Բ. Կ., Յ. Ղ., Ե. Յ., Ս. Ճ. և Գօլէճեան 5-ական դոլար: Շահումեան 4 դոլ: Արծրունի, Մ. Պ. և Սուր 3-ական դոլ: Բ. Ե. և Մաթէոս 2-ական դոլ: և 50-ական սէնտ: Մ. և եղբարք Փ. 2-ական դոլ: Ե. Բ. 1 դոլ. 50 սէնտ: Ոմն 1դ. 25 ս.: Գ. Ե., Ոմն, Փ. Ճ., դարձեալ ոմն, Մ. Լ., 2., Ճ. Հ., Սուր, Թ. Բ. և յոյն ոմն 1-ական դոլ. Դարձեալ ոմն, Զ. 2. և Է. 50-ական ս.: Դարձեալ ոմն, Փափ. և Ս. Տ. 25-ական ս.: 1892 յուլիս ամսւայ մէջ հաւաքուած 12 դոլ. և նոյն տարուայ նոյեմբեր ամսին Մասնաձիւղի անդամակցական տուրքերէն քաղուած 6 դոլ:.

Վոլոստըր Մաս քաղաքի կուսակցութեանս Մասնաձիւղից 270 դոլար, հանգանակված հետեւեալ անձերից.— Ստ. Ոսպ. 20 դոլ: Սեամ 17 դոլ: Ստ. Խարադ., Խայ. Սր., Գէորգ Աստ., Սեն. Պօն., Կար. տիշ. Պապ., Գր. Գիւլ և Մաթ. Կար. Թիւթ. 10-ական դոլ: Պօշ. Աշ. և Վար. քէնտ. 6-ական դոլ: Մար. Որբ., Պետ. Շմ., Գաս. քիւլ., Խաչ. Աւ., Աւ. Սարգ., Միք. Տ. Յով., Գր. Կեօշ., Վահ. Պօշ., Մին. Ճէլ., Գր. Նաղ., ԱՏ. Ահար., Գէորգ Սրպ., Յար. Կիր., Պաղ. Խաւ., Մ. Բ. Ման., Յար. Սէմէր., Խոր. Կիրակ., կրկին Խաչ. Աւ., Առ. Նալ., Յով. Չարգ., Կար. Խտթ., Սար. Տ. Մկտ. և Գր. Կոշի. 5-ական դոլ: Աս. Սարգ., Գր. Մ. Ման. և Յակ. Մարգ. 3-ական դոլ: Կրկին Գէորգ Սր., Գէորգ Պապ., ոմն, Աս. Ման., Կար. Յով., Աս. Մէլ., Միք. Գըզըլ., կրկին Ստ. Ոսպ., Յար. Պետ. և Սարգ. Մին., 2-ական դոլ: Գր. Չարք. և Մուշ. Ասատ. 1-ական դոլ:.

Բօսսօն քաղաքի կուսակցութեանս «Ծաղիկ Հայաստանի» անուն Մասնաձիւղից պ. Շաւարշի ձեռքով 67

դոլար և 30 սէնտ, հանգանակված հետեւեալ անձերից.— Սանտիկ Չարտիկ 8 դ. և 8 ս.: Կասողուրիկ 3 դոլ: Թաթուլ, Իշխանիկ, Շաւարշ, Արամ Նա., Հերի Սո., Մր. Յր. և Ա. Խյ. 2-ական դոլ: Հրաչեայ, Ա. Մ. Յ., Յ. Ժմբ. (Մօլտօն քաղաքից), Մ. Պ. Նգ., Վ. Ե., Պ. Պ., Ճէք, Ճօն, Բէյ., Հայ մը, Ճանիկ, կրկին հայ մը, Հայի, Տաճատ, Բագրատունի, Աշոտ Երկաթ, Կայծեր, Ծերուկ, Հելերոյ, Մք. Տ Յ., Տի. Տո., Սմբատ և Գ. Ե. 1-ական դոլ: Պօղոս 75 ս.: Հայ մը, Արտաշէս, Կրո. Փա., Տապար, Անձ մը, ՀՃի., Մ. Ա. Խ., Ս. Մ., Ժգ. Պղ., Մ. Բարսեղ և մէկ անձ 50-ական ս.: Յ. Թո., 30 ս.: Սր. Գ., Յ. Մ., Է., Պ. Տ., Գ. Թ. և Յ. Ա. 25-ական ս.: Ոմն 10 ս.: Մօլտօն եւ Բէտինք. հաւաքուած 11 դոլ. 80 սէնտ:

Ֆիլիսթուր քաղաքի կուսակցութեանս Մասնաձիւղից 101 դոլ. եւ 50 ս., հանգանակուած հետեւեալ անձերից.— Աբեղայ 15 դոլ: Խրկրաշարթ, Թոչուն, Սպայ, Սպարոպետ, Կացին, Սուր, Մարտ, Նիղակ, Գառնուկ, Ասպետ, Կայծակ, Կերանդի եւ Չինուր 5-ական դոլ: Աստղիկ 3 դոլ: Դրօշակակիր, Գնդապետ, Վտակ, Սարկաւազ եւ Նետ 2-ական դոլ: Զարթիք, Հուր, Փայլակ, Սոխակ, Երկաթ, Արոյոտ, Հնչակեան եւ Եփրատ 1-ական դոլ: Նաւակ 50 ս:.

Վայոտիս վիլլ քաղաքի կուսակցութեանս Մասնաձիւղից 210 դոլար, հանգանակված հետեւեալ անձերից.— Կ. Թ. 20 դոլ: Եղբարք Խ. 15 դոլ: Պ. եւ Կ. Գ. Պ. 12 դոլ: Պ. Օ. Տ. Պ., Կ. Տ.-Թ., Ս. Մ. եւ Տ. Խ. 10-ական դոլ: Յ. Պ. եւ Խ. Տ. 7-ական դոլ: Ա. Պ. Կ. Մ., Կ. Մ., Գ. Մ. Տ., Ս. Թ., Կ. Յ., Մ. Մ., Գ. Ս., Յ. Փ., Ծ. Մ., Տ. Ն., Վ., Մ. Պ., Ե. Մ., Պ. Օ. եւ Կ. Վ. 5-ական դոլ: Կ. Յ., Խ. Մ. եւ Պ. Խ. 3-ական դոլ: Գ., Գ. Շ., Ա. Ա., Ս. Խ. եւ Յ. Մ. Գ. 2-ական դոլ: Ա. Ե., Ա. Մ., Պ. Մ., Խ. Մ., Յ. Մ., Մ. Ա., Գ. Գ., Ա. Պ. Խ., Յ. Ա., Յ. Մ., Յ. Յ., Ս. Մ., Թ. Յ., Մ. Յ. եւ տաճկաստանցի յոյն մը 1-ական դ:.

Չիկագոյից Շ. Ի ձեռքով 65 Փրանկ, հանգանակված հետեւեալ անձերից.— Խարազան 15 Փր., Աներեւոյթ 7 Փր.: Ա. Զ. Մանօ, Կիւրեղ Յովսէփ, Թովմաս, Ս. Անտօն եւ Սեթո 5-ական Փր.: Զանազաններից 8 Փր.: Կիրակնօրեայ վճարներից 5 Փր:.

Լօռէնց քաղաքից Զարք. Պօշ. 2 դոլ: ԿԵՐՄԱՆԻԱՅԻ Շտոտագարտ քաղաքից Մ. Կ. գերմանական 15 մարկ:.

ԲՈՒՄԱՆԻԱՅԻ Փօքշան քաղաքից, Ար. Ջիր-ի ձեռքով 35 Փրանկ, հանգանակված հետեւեալ անձերից.— Յ. Ճիվաճիզ 10 Փր.: Պետր. եւ Գրիգ. եղբարք 6 Փր.: Գր. Նշան 5 Փր.: Մուր. Սերաստացի 5 Փր.: Ժամ. Սարգ. 3 Փր.: Յով. Գր. 3 Փր.: Պետր. այս. 2 Փ.: Օհան Փափ. 1 Փ:.

ԹԻԲԻԲԵԱՅԻ Կ. Պ. քաղաքից Անկեղծ խմբից 210 դահական, Լուցիկից 140 դահ., Արիւնից 60 դահ., Բիւզանդից 1 օսմ. ոսկի, Ինքոյ-Նիւթոյից 230 դահ., Կայծակից 78 դահ.: X. 3 րուբլ նամակադրօշմով: Z. 20 Փ:.

Յօղուածներ, թղթակցութիւններ, տեղեկութիւններ թղթագրամ գումարներ ուղարկել հետեւեալ հասցեով.— Athenes. (Grèce).—M. Beniard. Poste restante.

Աթէնք. Հայկական ազատ տպարան.